

**ԶՈՂՎԱԾ ԶԱՎԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**

17.09.2021 16:17



Հայրենիքի պաշտպանության համար փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված հարգանքի տուրք մատուցելու համար **2021 թվականի օգոստոսի 13-ին** ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվել էր միջոցառում:

Օգոստոսի 13-ը, Արցախյան երկրորդ պատերազմում նահատակված Լևոն Լևոնյանի ծննդյան օրն է:

Լևոնը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող էր, երբ 2020-ի օգոստոսին զորակոչվեց բանակ: Նա ընդամենը 40 օրվա ծառայող էր, երբ սկսվեց պատերազմը: Հենց առաջին օրից նետվել է ռազմադաշտ, կռվել Ակնայում, զոհվել՝ Կարմիր շուկայում՝ 2020թ. հոկտեմբերի 30-ին ԱԹՍ հարվածից:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հերոսի ընտանիքին՝ այցելելով փաստաբան Կարեն Լևոնյանի որդուն՝ Լևոն Լևոնյանի շիրմին:

Այնուհետև, Սևանի Ս. Զաքարյանի անվան մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ նկարահանված **«Չպարտվածները» վավերագրական ֆիլմի առաջին դիտումը:**

Ֆիլմը պատմում է փաստաբանների նահատակված զավակների՝ **Լևոն Լևոնյանի, Հրաչիկ Ավետիսյանի և Միքայել Դանիելյանի** մասին, ովքեր անձնվիրաբար մարտնչել և անմահացել են արցախյան երկրորդ պատերազմում:

Ֆիլմի դիտմանը ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներից բացի ներկա էին նաև **Տեր Նշան Քահանա Սարգսյանը, Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը, Համայնքապետարանի ներկայացուցիչները, զոհվածների ծնողներն ու հարազատները, զոհվածների դասուցիկներն ու ուսուցիչները:**

**«Չկա ավելի մեծ նվիրում, քան երբ մարդը իր կյանքը զոհաբերում է այլ մարդու, կամ մարդկանց: Չկա ավելի մեծ նվեր և մեր հերոսներն իրենց կյանքն են զոհաբերել հանուն մեզ»,-** նշել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Փաստաբանների պալատի նախագահը իր խոսքում ընդգծել է նաև, որ **հերոսների ընտանիքները պետք է մշտապես ուշադրության կենտրոնում լինեն, հերոս ծնած ընտանիքի անդամը պետք է առավելություն ունենա բոլորից և պետք է ցանկացած միջավայրում ընդգծված հարգանքի արժանանա:**

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմինե Ղուկասյանը, ողջունելով ներկաներին, նշել է, - **«Գուցե շատերը մինչև պատերազմը Լևոնին չէին ճանաչում, ես ինքս էլ լավ չէի ճանաչում նրան, բայց պատերազմից հետո, նրա նահատակվելուց հետո ես ճանաչեցի ոչ միայն Լևոնին, այլ նաև մեր 17 քաղերին: Սևան համայնքը 17 անգամ գլուխ է խոնարհել, Սևան համայնքը լավ գիտի, որ այդ տղաները իրենց պարտքն են կատարել հայրենիքի հանդեպ, նրանք կատարել են իրենց պարտքը, իսկ մենք պարտք ենք նրանց:**

**Մենք պարտք ենք նրանց ուժեղ ու հպարտ հայրենիք, ու**

**պիտի բոլորս այնպես ապրենք, որ մեր տղաների աչքերում եղած հաղթանակը իսկապես ի կատար ածենք»:**

Հրաչիկի մայր փաստաբան Մաի Հակոբյանը նշել է,- **«Հպարտորեն ենք ընդունում, որ Մեր զավակներն են այդ արու զավակները, հերոս զավակները, ովքեր մաքուր անկատար երազանքներով լի կյանքը տվել են մեզ: Այն նուրբ սերը, որ տվել ենք իրենց, իրենք մի քանի անգամ ավելին վերադարձրեցին մեզ: Չամուսնացածներին խնդրում եմ չվախենալ ամուսնանալ և մեկի տեղը 4 և ավելի զավակներ ունենալ»:**

Լևոնի հայր փաստաբան Կարեն Լևոնյանը նշել է, որ **այսօր իր տղայի 21-րդ տարեդարձը, տխուր տարեդարձը, միաժամանակ նաև հպարտության տարեդարձ է: Նա նշել է, որ անչափ հպարտ է, որ Լևոնի հայրն է:**

Եզրափակելով իր խոսքը՝ Լևոնի հայրը նշել է,- **«Բոլորին մաղթում եմ խաղաղություն, այն խաղաղությունը, որը պարզևեցին մեր զավակները»:**

Հ.Գ. Փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն ամեն տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցելու մեր հերոսների ընտանիքներին:

**Դիտել՝ օրվա մասին պատմող տեսանյութը**

**Դիտել՝ «Հպարտվածները» վավերագրական ֆիլմը**


























Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })